ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում դասվարի՝17 և 19 դասաժամ,կերպարվեստ՝5 դասաժամ,ռուսաց լեզու՝8 դասաժամ,հայոց լեզու և գրականություն՝ 8 դասաժամ թափուր աշխատատեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

. դիմում(Ձև 1) , մեկ լուսանկար 3 x 4 չափսի,
. բարձրագույն կրթությամ մասին փաստաթուղթ (դիպլոմ),
. անձը հաստատող փաստաթուղթ,
. «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26 –րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,»
. ինքնակենսագրություն (Ձև 4) ,
. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում) ,
. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ,կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի օգոստոսի 29 -ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից 17:00,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 17-ին՝ժամը 15:00-ին Ծակքար գյուղի միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գյուղ Ծակքար 1-ին փողոց 16 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել 077-01-01-04 հեռախսահամարով: